

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-12-3-Ա

ք. Երևան

19.12.2022թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի դեկտեմբերի 19-ի նիստում քննարկեց 2022 թվականի նոյեմբերի 7-ին լիազորված անձ Անի Դավթյանի կողմից ներկայացված՝ «Արտ պրոդուկտ» ՍՊԸ ընկերության (Արտաշատ, Ս. Հակոբյան 173, AM) «ART PRODUCT» (No20211577) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.  
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ ապրանքային նշանում առկա «АРТАШАТСКИЙ КОМПЛЕКСНЫЙ ЗАВОД» գրառումն մոլորության մեջ է գցում ապրանքի արտադրողի վերաբերյալ հարցերում: Այսինքն՝ միջին սպառողի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե նշանը պատկանում է «Արտաշատի պահածոների գործարան» ընկերությանը, սակայն նշանը ներկայացված է «Արտ պրոդուկտ» ՍՊԸ կողմից: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «Art Food» («Արտաշատի պահածոների գործարան»

ԲԲԸ, Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, N 9720, 16.08.2005) բառային ապրանքային նշանին: «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 122-րդ կետի, 124-րդ կետի, 130 -րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, համակցված ապրանքային նշաններին նման կարող են լինել ապրանքային նշանների այն տեսակները, որոնք որպես տարրեր ներառված են ստուգվող համակցված ապրանքային նշանի մեջ: Տվյալ դեպքում նման տարր է հանդիսանում «Art» տարրը, որն ամբողջությամբ ներառված է հայտարկված համակցված նշանի մեջ, և որոնք ունեն ձայնային և իմաստային նմանություն՝ «(Art) Food», «(ART) PRODUCT», ինչ վերաբերվում է «Food» (սնունդ, ուտելիք) և «PRODUCT» (ապրանք, արտադրանք) գրառումներին, ապա դրանք նշում են ապրանքի տեսակը և տվյալ պարագայում արտահայտում են նույն իմաստը, քանի որ հայտում նշված ապրանքների համար արտադրանքը վերաբերում է սննդին:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների և ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ ապրանքային նշանում առկա «АРТАШАТСКИЙ КОНСЕРВНЫЙ ЗАВОД» գրառումն մոլորության մեջ է գցում ապրանքի արտադրողի վերաբերյալ հարցերում: Ինչպես նաև «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մականշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող ավելի վաղ «Art Food» («Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ, Արտաշատ, Օգոստոսի 23-ի փողոց, N 9720, 16.08.2005) բառային ապրանքային նշանին:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ փորձաքննության կայացրած որոշումը իրավաչափ է և հայտարկված ապրանքային նշանը ենթակա է մերժման:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը միաձայն.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել լիազորված անձ Անի Դավթյանի կողմից ներկայացված «Արտ պրոդուկտ» ՍՊԸ ընկերության «ART PRODUCT» (No20211577) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**ՆԱԽԱԳԱՀ**

**ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ**